Ե-2342
18 օգոստոսի, 2015թ.

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՊԱՐՈՆ Գ. ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն դատախազ,

Սույնով հայտնում եմ իմ մտահոգությունը ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Տիգրան Հայրապետյանի նկատմամբ հարուցված քրեական գործի կապակցությամբ, որը ոչ այլ ինչ է, քան ուղղակի միջամտություն փաստաբանի մասնագիտական պարտականությունների կատարման նկատմամբ՝ վարույթն իրականացնող մարմնում հայտնած իր կարծիքի կամ դիրքորոշման համար:

Զավեշտալին այն է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը փաստաբան Տ. Հայրապետյանին մեղադրում է «սադրիչ հարցեր տալու և չափից ավելի միջնորդություններ ներկայացնելու համար»:

Կարծում եմ, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունն՝ ի դեմս քննիչ Խ. Մեջլումյանի, իր այս քայլով մեզ վերադարձնում է ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա.Յ. Վիշինսկու (1935-1939 թթ.) ժամանակաշրջանը, երբ մարդու իրավունքների պաշտպանության ցանկացած ձև իրավապահ մարմինների կողմից դիտվում էր որպես «ժողովրդի թշնամիների գործողություն»:

Ավելորդ չեմ համարում հիշատակել, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով: Փաստաբանը փաստաբանական գործունեություն իրականացնելիս ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլ անձանց իրավունքները և ազատությունները:

Ավելին, ՀՀ օրենսդրությունը չի սահմանափակում փաստաբանի կողմից միջնորդություններ ներկայացնելու քանակը, ինչ վերաբերում է այդ միջնորդություններին որակին, ապա այն քննարկման առարկա դարձնելուց հետո նոր կարելի է իրավական գնահատական տալ այն էլ օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

Փաստորեն սույն դեպքում «զենքերի հավասարության» սկզբունքի խախտում է տեղի է ունեցել, քննիչը չարաշահելով իր լիազորությունները, ինքն իրեն իրավունք է վերապահել գործով ներգրավված փաստաբանի նկատմամբ քրեական գործ հարուցել՝ փորձելով դրա միջոցով հոգեբանական ճնշում գործադրել փաստաբանի նկատմամբ և

խուսափել նրա պաշտպանյալ Ջուլիետա Ամարիկյանին հոգեբուժարանում ապօրիի պահելու, նրա արժանապատվությունը նվաստացնելու և խոշտանգման դեպքի առնչությամբ հարուցված քրեական գործը բացահայտելուց:

Այսպիսով, ելնելով վերոշարադրյալից կարծում եմ, որ ՀՀ գլխավոր դատախազությունը և ՀՀ հատուկ քննչական ծառայությունը պետք է անհապաղ դադարեցնեն քրեական հետապնդումը փաստաբան Տ. Հայրապետյանի նկատմամբ, իսկ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Խ. Մեջլումյանի նկատմամբ իրականացնել ծառայողական քննություն և նրան ենթարկել պատասխանատվության՝ պաշտոնական դիրքը չարաշահելու համար:

ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ
«Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների
պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ
գործադիր տնօրեն